ԵՐԵՎԱՆԻ ԼՃԵՐԸ[1]

Թոխմախան գյոլ կամ Թոխմախ լիճ

Թոխմախան գյոլ կամ Թոխմախ լիճ կոչվող արհեստական ջրամբարը կառուցվել է մ.թ.ա. VIIIդ.: Թոխմախան լճի մակերեսը կազմում է 8 հա: Խորհրդային տարիներին այն կոչվել է «Կոմերիտմիության», իսկ 2000 թվականից՝ «Վարդավառի»:

1578թ. Երևանի «Թոքմաք» կամ «Թոխմախ» մականունով Մահմադ կամ Մահմմադ խանն այն վերանորոգել է և անվանադիր դարձել լճակին: Ավանդության համաձայն՝ լսելով գեղեցկուհի Աբու-Հայաթի ինքնասպանության լուրը՝ նրա փեսացու Թոքմաք խանն իրեն նետել է այս լիճը ու խեղդվել, որից հետո լիճը կոչվել է Թոխմախան գյոլ:

Էրեբունի լիճ

«Էրեբունի» լիճը (Ծով Արգիշտիի) գտնվում է Էրեբունի վարչական շրջանում, այն վերակառուցվել է 1965թ.՝ ճարտարապետ Գ. Մուշեղյանի նախագծով: Ըստ պատմական աղբյուրների՝ լիճը հիմնադրել է Արգիշտի 1-ինը մ.թ.ա. 782թ.: Արգիշտի 1-ինը Էրեբունի քաղաքը ջրով ապահովելու համար կառուցել է Մամռի և Աբուհայաթի ջրանցքները, որոնցով Իլդարունի (Հրազդան) գետի ջուրը հասցրել է (Էրեբունի) Արին Բերդ: Այդպես ստեղծվել է այս լիճը: Ապա, այդտեղից ջուրը տուֆակերտ խողովակներով հոսել է Էրեբունի ամրոցի ստորոտ: Այս ջրաշինական հուշարձանը շուրջ երեք հազար տարեկան է, իսկ նրա չափերը մնացել են գրեթե անփոփոխ: 1975-1985թթ. լճի հատակը բետոնապատվել է, ափերը՝ քարով շարվել: Լիճը սնվում է ստորգետնյա ջրերով:

Երևանյան լիճ

Երևանյան լիճն արհեստական ջրամբար է, որը գտնվում է Երևանի հարավարևմտյան մասում՝ Հրազդանի կիրճում: Կառուցվել է 1963-1964թթ. Թամանցիների փողոցի կառուցումից հետո: Մակերեսը՝ 0.65 քառ. կմ է, առավելագույն լայնությունը՝ 5 կմ, առավելագույն խորությունը՝ 18մ, ջրի ծավալը՝ 4,8 մլն խոր. մետր, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 908մ, սնվում է Հրազդան գետից, ափերը մասամբ բետոնապատ են: Լճից սկիզբ են առնում Էջմիածնի և Շադրլուի ջրանցքները:

Ըստ հնագետ Բենիկ Երիցյանի՝ լճի տակ են մնացել հնագիտական արժեք ներկայացնող հուշարձաններ: Լճի մերձակայքում են գտնվում Երևան անունը կրող քարանձավախմբերը (Երևանյան քարայր 1, 2, 3): Լճի տակ են մնացել նաև հնագույն Ումեշինի ջրանցքի հետքերը. այն նշանավոր ուրարտական ջրանցքի, որը ոռոգել է

---

[1] «Հին ու նոր Երևան», պատմական տեղեկագիր գիրք-ուղեցույց, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009:

Էջմիածնի այգիները։ 2000թ. սկզբներից լճի մերձակայք է տեղափոխվել նաև ԱՄՆ-ի դեսպանատունը։

Կարապի լիճ

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի՝ Ազատության հրապարակի հարավարևելյան կողմի ցածրադիր վայրում է գտնվում է ամառային Կարապի լիճը, որը հիմնվել է 1963թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ ճարտարապետ Գ. Մուշեղյանի նախագծով։ «Կարապի լիճ» անունը ստացել է նրանում լողացող սև և սպիտակ կարապների պատճառով։ Կարապի լճի մի հատվածը, երևանյան ցրտաշունչ ձմռանը վերածվում է սահադաշտի։

Լամպերի լիճ

«Երազ» գործարանի շրջակայքում՝ Ազատության պողոտայի հարևանությամբ, կառուցվել և ձևավորվել է մի լճակ, որը ժողովրդի մեջ հայտնի է Լամպերի լիճ անվամբ, քանի որ գտնվում է Լամպերի գործարանի հարևանությամբ։